

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ո

Ընդունված է 2011 թվականի նոյեմբերի 28-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆԱԳԻՐՔ (վերնագիրը խմբ. 21.06.14 ՀՕ-112-Ն)

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
4) **ընդերքօգտագործող**՝ իրավաբանական անձ (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություն), որը, սույն օրենսգրքին համապատասխան, իրականացնում է ընդերքօգտագործում.
[4.1\) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից..](#)

5) **ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն**՝ համաձայնություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու՝
ա. ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություն՝ ռեգիոնալ երկրաբանաերկրաֆիզիկական աշխատանքներ, երկրաբանական հանույթ (քարտեզագրում), երկրաքիմիական, սեյսմաբանական, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ, գիտահետազոտական, հնէաբանական և այլ աշխատանքներ՝ ուղղված ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությանը,

Հոդված 30. Զգուշացումը և ընդերքօգտագործման իրավունքի [կասեցումը](#), դադարեցումը

2. Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա՝

3) չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4) [չի տեղեկացրել լիազոր մարմնին երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում՝ սույն օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով պահանջվող տեղեկությունների փոփոխությունների մասին սույն օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված ժամկետում, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում՝ 38-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով պահանջվող տեղեկությունների փոփոխությունների մասին սույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով սահմանված ժամկետներում, իսկ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում սույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կամ 10-րդ կետերով պահանջվող տեղեկությունների փոփոխությունների մասին սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-րդ կետերով սահմանված ժամկետներում:](#)

5) [չի տեղեկացրել սույն օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 7.1-րդ կամ 38-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կամ 49-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետերով պահանջվող իրական սեփականատերերի մասին տեղեկությունների գրանցման կամ փոփոխության վերաբերյալ սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կամ 46-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2-րդ կամ 59-րդ հոդվածի 3-րդ մասի 18.2-րդ կետերով սահմանված ժամկետներում:](#)

[2.1 սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում տրված զգուշացման հիմքերը չվերացրելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքը կասեցվում է մինչև սահմանված տեղեկատվության ներկայացումը \(բայց ոչ ավելի քան 120 օրյա ժամկետով\):](#)

2.2. Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրողին տալիս է զրավոր զգուշացում սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքի բացահայտման օրվանից հետո՝ 10 օրյա ժամկետում:

2.3 Սույն հոդվածի 2.1-րդ մասով նախատեսված դեպքերում լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ որոշում է ընդունում սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետով նախատեսված դեպքում լիազոր մարմնի կողմից տրված զգուշացմանը սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

3. Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման կամ կասեցման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում կամ մինչև կասեցման համար սահմանված ժամկետը լրանալը, վերացրել է նշված հիմքերը:

5. Ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե՝

2) լուծարվել է ընդերքօգտագործող իրավաբանական անձը, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց.

~~3) լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:~~ 3) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել լիազոր մարմնի սահմանած ժամկետում զգուշացման (մինչև 90 օր) կամ կասեցման (մինչև 120օր) հիմքերը

4) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է.

4.1) ընդերքօգտագործման իրավունք ստացած իրավաբանական անձի բաժնետեր է դարձել իրավաբանական անձ, ում նախկինում տրված ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

Հոդված 33. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցելը

1. Երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու նպատակով դիմումը ներկայացվում է լիազոր մարմին:

2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

7) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

7.1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

7.2) դիմումի ներկայացումից հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը ընկած ժամանակահատվածում իրական սեփականատերերի փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցումից հետո իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից.

8) ներկայացված փաստաթղթերի ցանկը:

ՀՈԴՎԱԾ 33.1 Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցելու դիմումի մերժումը

1. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության հայցելու դիմումը մերժվում է, եթե

1) ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

2) ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ երկրաբանական ուսումնասիրության իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահաջվող տարածքը.

3) դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները եղելքավարարում օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

4) երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պահովման, հնչալես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին.

5) սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերով սահմանված հիմքերով դադարեցվել է դիմումատուի՝ նախկինում ունեցած ընդերքօգտագործման որևէ իրավունք.

6) երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցող իրավաբանական անձի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանցից որևէ մեկին տրված ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

7) ընդերքի տեղամասը գտնվում է օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված տարածքներում, եթե ծրագրով նախատեսված է լեռնային փորվածքների անցում և ենթակառուցվածքների ստեղծում, որը ուղեկցվում է հողային ծածկույթի խախտումով.

8) դիմումատուի ներկայացրած փաստաթղթերի թերի կամ ներկայացված ուսումնասիրության ծրագիրը, հնչալես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված պահանջներին ահամապատասխանելու մասին լիազոր մարմնի արմնիտասխանելունիստրված ժամկետում դիմումատուինչի վերացրել ծանուցման անուցմաննն.

2. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:

3. Սույն հոդվածով չսահմանված այլ հիմքերով դիմումի մերժումն արգելվում է:

Հոդված 35. Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը

2. Պայմանագրում մասնավորապես նշվում են՝

4) ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկությունները սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնելու ընդերքօգտագործողի պարտականությունը:

5) 33-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով պահանջվող տեղեկության փոփոխության մասին փոփոխություն կատարելուց հետո՝ 14 օրվա ընթացքում լիազոր մարմնին տեղեկացնելը.

6) իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) փոփոխության (փոփոխությունների) պետական գրանցումից հետո փոփոխության մասին լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում տեղեկացնելը՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

:

Հոդված 38. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը

2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

7) դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը): 7) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

7.1) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ դիմումի ներկայացումից հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը ընկած ժամանակահատվածում իրական սեփականատերերի փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցումից հետո իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից.

Հոդված 40. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը

7. Լիազոր մարմինը մերժում է դիմումը, եթե՝

9) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուին դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երևակման տեղամաս:

10) եթե մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցող իրավաբանական անձի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանցից որևէ մեկին տրված ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

Հոդված 42. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետը և դրա երկարաձգումը

7. Երկրաբանական ուսումնասիրության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-4-րդ և 76-7-րդ մասերով սահմանված կանոնները:

Հոդված 43. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնումը

3. Ընդերքի տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-4-րդ և 76-7-րդ մասերով սահմանված կանոնները:

Հոդված 45. Ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարումը

2. Դիմումում և դրան կից ներկայացվում են՝

3) նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

4) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

Հոդված 46. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները

2. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը պարտավոր է՝

2) լիազոր մարմնին տեղեկացնել արդյունաբերական նշանակություն ունեցող օգտակար հանածոների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո՝ 14 օրվա ընթացքում.

2.1) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցողի դեպքում՝ լիազոր մարմնին տեղեկացնել 38-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով պահանջվող տեղեկության փոփոխության մասին՝ փոփոխություն կատարելուց հետո՝ 14 օրվա ընթացքում.

2.2) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցողի դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված ժամկետում իրականացնել իրական սեփականատերերի գրանցում և լիազոր մարմնին ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) փոփոխության (փոփոխությունների) պետական գրանցումից հետո փոփոխության մասին լիազոր

մարմնին տեղեկացնել 14 օրվա ընթացքում՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

Հոդված 49. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը

2. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝

~~8) դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան:~~ «8) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում պետական ռեզիստրի կողմից տրված, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

8.1) դիմումի ներկայացումից հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը ընկած ժամանակահատվածում իրական սեփականատերերի փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցումից հետո իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ ի բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

Հոդված 51. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը

11. Լիազոր մարմինը մերժում է դիմումը, եթե՝

9) ֆինանսական երաշխիքը տվել է այն իրավաբանական անձը, որը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին:

10) եթե մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցող իրավաբանական անձի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանցից որևէ մեկին տրված ընդերօգտագործման իրավունքը դադարեցվել է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

Հոդված 55. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետը և դրա երկարաձգումը

5.1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի ~~2-4~~2-9 ~~րդ և 11-րդ~~ ~~րդ~~ մասերով սահմանված կանոնները:

Հոդված 56. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնումը

3. Լիազոր մարմինը մերժում է սույն հոդվածով նախատեսված ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը, եթե առկա են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի ~~5~~11-րդ մասով նախատեսված հիմքերը:

6. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի ~~2-9~~ ~~րդ~~ ~~2-4~~ ~~րդ~~ մասերով սահմանված կանոնները:

Հոդված 57. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխությունը

4. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-9-րդ և 11-րդ 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:

Հոդված 58. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարումը

2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

5) նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

6) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

Հոդված 59. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները

3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է՝

18) իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումները:

18.1) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցողի դեպքում՝ լիազոր մարմնին տեղեկացնել 49-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով պահանջվող տեղեկության փոփոխության մասին՝ փոփոխություն կատարելուց հետո՝ 14 օրվա ընթացքում,

18.2) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցողի դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված ժամկետում իրականացնել իրական սեփականատերերի գրանցում և լիազոր մարմնին ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) փոփոխության (փոփոխությունների) պետական գրանցումից հետո փոփոխության մասին լիազոր մարմնին տեղեկացնել 14 օրվա ընթացքում՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

19) մետաղական օգտակար հանածոյների դեպքում ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաղորդումը, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը՝ ամփոփ տարեկան հաշվետվությունը:

Հոդված 60.3. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները

5. Սույն հոդվածի 5-րդ 4-րդ մասով նախատեսված փոփոխված պլանները ներկայացվում են ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում

բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնեցմանը:
Համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 60.4. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերանշակման պլանների ֆինանսական երաշխիքները

6. Սույն հոդվածի ~~6-րդ~~5-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ ընդերքօգտագործողը ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսական նոր երաշխիք կամ ֆինանսական երաշխիքի ժամկետի երկարաձգման մասին ֆինանսական երաշխիք տված իրավաբանական անձի պատշաճ վավերացրած փաստաթուղթ: